

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՐԻՄՆԱՅԱՑԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

### ՄԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ինքնության խնդիրը թե՝ անհատական, թե՝ կոլեկտիվ մակարդակներում առանձնապես կարևորվում է արդի ժամանակաշրջանում գլոբալացման երևույթների ծավալմանը զուգընթաց, քանի որ անհատական, կորպորատիվ, ազգային և այլ մակարդակներում տարբեր մշակույթներ կրող մարդկանց շփումներն ավելի ու ավելի են մեծանում, և առաջանում է աշխարհում սեփական «հասցեն» կամ «արմատը» գտնելու կամ հիմնավորել-պահպանելու պահանջ: Ինչ խոսք, ինքնության մասին հարցադրումը չի կարելի համարել գլոբալացման դարաշրջանի ծնունդ, քանի որ այդ մասին մտածողները սկսել են մտորել շատ ավելի վաղ՝ բացարձակապաշտական մտածողությունից հարաբերապաշտականին անցնան դարշրջանում, այսինքն՝ դասականությունից դեպի արդի աշխարհ անցնան ընթացքում: Դասական աշխարհի մարդուն տրված են բացարձակ ու առաջին հայացքից անսասան սկզբունքներ, և որևէ սոցիոնշակութային խմբի պատկանելությունը մարդուն տրված էր ապրիորի: Մարդն անգամ չէր մտածում դրա մասին՝ ընկալելով որևէ էթնոսի, խավի, արհեստի իր պատկանելը որպես տրվածություն: Կարծես ամեն ինչ այդպես էլ պետք է լիներ: Իսկ հասունացող անձնավորությունը պարզապես սովորում էր նմանվել տվյալ խմբի հասուն ու գործուն ներկայացնեցին՝ դրանով անգիտակցաբար լուծելով ինքնանույնացման խնդիրը: Այնինչ ոչ դասական մշակույթի մարդու համար որևէ հանրության պատկանելությունը դառնում է հարաբերական՝ հանգամանքներից կախված: Մարդն աստիճանաբար դառնում է «անտունի» էակ, որը կարող է ընտրել իր այս կամ այն մշակութին պատկանելը, այսպիսին կամ այնպիսին լինելը, քանի որ իրականությունը նրան առաջարկում է ինքնության ոչ թե մեկ մոդել, այլ տարբեր այլ ընտրանքներ: Տրվածությունն իր տեղը սկսում է զիջել ընտրել-վերցնելուն: Իսկ այդ գործընթացն իր հերթին ծնում է բազմաթիվ նորանոր անորոշություններ, անգան իսկ՝ ճգնաժամներ՝ առաջ բերելով ինքնության գաղափարի հիմնավորումների, դրա շուրջ տեսական-փիլիսոփայական խորհրդածությունների պահանջ:

Ժամանակակից հայ սոցիալ-փիլիսոփայական միտքը ևս փորձում է միջնորդային հետազոտությունների միջոցով վերլուծել «ինքնություն» և «հայոց ինքնություն» գաղափարներն իրենց բազմակողմանի կապակցությունների մեջ: Ըստ Ա. Ռուկանյանի՝ «ինքնություն» բառը բազմիմաստ է և տարբեր փիլիսոփայական ենթատեսատերում կարող է տարբեր մեկնու-

թյուններ ունենալ: Յիմնական ընթանումները երկուսն են. *առաջինը կապված է ուրիշից տարրերվելու, հենց ինքը լինելու պարագայի հետ* (այդ դեպքում օգտագործվում է Եզրերի հետևյալ խումբը՝ Ego, Ich, Selbst, Selbstigkeit, Self, Selfness, Я, Самость և այլն), *երկրորդում ինքնության կենտրոնացում-խտացումը շեշտվում է վիճակների նույնությունն արձանագրելու միջոցով* (նաև դեպքերին համապատասխանում է «նույնություն»՝ Identität, Identity, անդեպքում եզրը)<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, նաև նույնությունը կ' ինքը լինելը, և նույնականացումը վերագրվում են «ինքնություն» եզրույթին, ինչով իհմնականում կարելի է բացատրել հայերեն փիլիսոփայական և ընդհանրապես հասարակագիտական գրականության մեջ «ինքնություն» բառի օգտագործումը:

Եթեմն էլ օգտագործվում են և «ինքնություն», և «նույնականությունը», որոնք ընկալվում են որպես հոմանիշներ: Է. Յարությունյանը, օրինակ, ազգային ինքնությունն ու ազգային խառնվածքը բացատրելիս օգտագործում է «նույնականացում», «նույնականություն» հասկացությունները: Նա թեպետ հատուկ չի սահմանում «ինքնություն» և «նույնականություն» հասկացությունները, սակայն համատեքստից զգացվում է, որ դրանք օգտագործվում են որպես հոմանիշներ<sup>2</sup>: Եվ ընդհանրապես, նկատվում է, որ Identity եզրույթի փիլիսորեն հայերենում «ինքնություն» հասկացությունն է ավելի շատ օգտագործվում: Մինչդեռ, օրինակ, Սթանֆորդի փիլիսոփայական հանրագիտարանում Identity-ն բացատրվում է որպես նույնություն կամ նույնականություն՝ sameness. «Ասել, որ իրերը նույնական են (Identical) նշանակում է, որ դրանք նույնն են (same)»<sup>3</sup>:

«Նույնականության երևույթ (phenomenon of Identity)» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դմում Զ. Ֆրոյդի հետևողը է. Երիկսոնը, որը նաև վերլուծում-նկարագրում է նույնականացման՝ իդենտիֆիկացիայի որոշ գործնրացները<sup>4</sup>: Նա Identity-ն բացատրում է որպես «էգո»-ի՝ իր ինքնանույնությունն ու ամրողականությունը պահպանելու ընդունակություն, ներմուծելով նաև «նույնականության ճգնաժամ» հասկացությունը<sup>5</sup>: Երիկսոնը թեև հոգեբանական վերլուծության դաշտից է զալիս՝ նշելով, որ ինքնանույնականության ճգնաժամերը անհատի հոգեբանական զարգացման փուլեր են, այնուամենայնիվ ընդունում է, որ նույնականության խնդիրն ունի պատմական և փիլիսոփայական նշանակություն, իսկ ինքը՝ նույնականությունը, պատմական երևույթ է<sup>6</sup>: Ինքնանույնականության

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Ոսկանյան**, Ազգային ինքնության իհմնահարցը և մտավորականության կոչումը // Ինքնություն, Եր., 1995, էջ 11:

<sup>2</sup> Տե՛ս **Է. Յարությունյան**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., 2004, էջ 46-51:

<sup>3</sup> «Stanford Encyclopedia of Philosophy». www.plato.stanford.edu/entries/Identity. Յոդվածում մտքի շարունակությունը հետևյալն է. «Identity» and «sameness» mean the same; their meanings are identical», այսինքն՝ Identity-ն դիտվում է որպես նույնականություն:

<sup>4</sup> Տե՛ս **Գурևիչ Պ.** Предисловие // **Эриксон Э.** Трагедия Личности. М., 2008, էջ 5-6, նաև՝ **Эриксон Э.** Идентичность: юность и кризис. М., 1996:

<sup>5</sup> Տե՛ս **Эриксон Э.** Трагедия Личности, էջ 135:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 126-181:

խնդրի տարբեր կողմերին անդրադառնում են Կ. Յունգը, Է. Ֆրոնը, Ա. Մասլովուն, Յ. Հաբերմասը, Վ. Յուսլեն, Կ. Յորնին, Ի. Կոնը և այլք<sup>7</sup>:

Արդյոք «ինքնություն» և «նույնականություն» բառերը հոմանիշնե՞ր են, թե կա որոշակի սկզբունքային տարբերություն դրանցում: Պարզվում է, որ կա տարբերություն, որը, սակայն, հայալեզու փիլիսոփայական գրականության մեջ հիմնականում չի նկատվում: Բայց այդ տարբերությունը կարևոր է, քանի որ ինքնության և նույնականության ճգնաժամերը տարբեր են: Ըստ գերմանացի փիլիսոփա Վիտտորիի Յուսլեի՝ ինքնությունը անձնավորության (կամ խմբի, եթե խոսքը կոլեկտիվ ինքնության մասին է) բնույթի մի կողմն է, որ ինքնին կա, ինքն է: Բայս ինքն էլ արտահայտում է այդ ինաստը՝ ինքնություն, ինքը լինելը: Նա տարբերակում է «Ես»-սուբյեկտ և «Ես»-օբյեկտ, որտեղ «ինքնությունը» «Ես»-օբյեկտն է: Եթե «Ես»-ը դիտարկում է իր «ինքնությունը»<sup>8</sup>, հակադրվում է վերջինիս, ինչպես սուբյեկտը օբյեկտին, սակայն «Ես»-ը կարող է դիտարկել նաև իր դիտարկելու հակումը, այդ դեպքում նախորդ «Ես»-ը դառնում է մետադիտարկում իրականացնող «Ես»-ի համար օբյեկտ, «ինքնություն»<sup>9</sup>: Պարզ է, որ այս բաժանումը հարաբերական է: «ինքնությունը» կարող է դառնալ «Ես», իսկ «Ես»-ը՝ «ինքնություն», սա միասնական գործընթաց է, որի մասերը տարբերակվում են նույնականության ճգնաժամը բացատրելու նպատակով: Յիշողությունը, իսկ հասարակական խմբերի դեպքում՝ պատմական հիշողությունը կամ մշակույթը, «ինքնությանը» հնարավորություն են տալիս դառնալու «Ես»: «Մենք Յայկի, Տիգրանի սերունդներն ենք» կամ «Մենք առաջին քրիստոնյա պետության հետևողաբար ենք» պարզագույն նույնականացնող դատողությունների միջոցով հայոց «ինքնությունը», որն օբյեկտիվ է ամեն նոր սերնդի համար, դառնում է այն գիտակցողների «Ես»-ը: Իր հերթին «Ես»-ը դառնում է «ինքնություն» իդեալների, ճգտումների շնորհիվ: Անհատը կամ հասարակական խումբը պատկերացնում է այն արժեքներն ու իդեալները, որոնց հիման վրա ցանկանում է ձևավորել ինքն իրեն, ապա տեղի է ունենում այդ արժեքների ու իդեալների ներքնայնացնայութացման գործընթաց, որի շնորհիվ «Ես»-ը դառնում է «ինքնություն»՝ հարստացնելով այն:

Որպես կանոն՝ ինքնադիտարկում իրականացնող «Ես»-ը իրեն նույնական է գգում իր «ինքնության» հետ, սակայն ճգնաժամային իրավիճակներում տեղի է ունենում ամբողջականության ու ներդաշնակության խախտում: «Նույնականության» ճգնաժամի դեպքում «Ես»-ը չի ընդունում իր «ինքնությունն» ու չի ցանկանում զգալ իր նույնականությունն իր «ինքնությանը», իսկ «ինքնության» ճգնաժամի դեպքում «Ես»-ը գուցեն ճգտում ումի նույնամալու, սակայն կառուցված չէ «ինքնությունը»:

<sup>7</sup> Տես Յոնգ Կ. Психологические типы. М., 1996, Փրոմմ Յ. Иметь или быть. М., 1990, Կոհ Ի. Ս. Открытие Я. М., 1978, Առյօնի՝ В поисках себя. М., 1984, Habermas U. Communication and Evolution of Society. Boston, 1979:

<sup>8</sup> «ինքնություն» եզրույթը որպես «Ես» - «ինքնություն» երկանդամի կողմ օգտագործելիս այսուհետ կվերցվի չակերտների մեջ՝ չշփորելու համար մեզանում ընդունված ինքնության առավել լայն ընկալման հետ:

<sup>9</sup> Տես Խեսլե Յ. Կризис индивидуальной и коллективной идентичности // Апокалипсис смысла. Сборник работ западных философов XX–XXI веков. М., 2007, էջ 23-24:

Անձնավորության աճը տեղի է ունենում նախ «ինքնության» կառուցման, ապա այն հաղթահարելու շնորհիվ նոր «ինքնության» հասնելու միջոցով, իսկ մինչ այդ անձնավորությունն ապրում է նույնականացման ճգնաժամ, երբ այլև չի ցանկանում իրեն նույնացնել այն «ինքնության» հետ, որ ուներ մինչ ճգնաժամը: Սակայն ճգնաժամը միշտ չէ, որ լուծվում է աճի ժամապարհով (դա ճգնաժամի դրական լուծնան ուղին է), երբեմն ճգնաժամի հետևանքով տեղի է ունենում հետաձ, իսկ երբեմն էլ՝ ելք արժեքների տվյալ համակարգից: Այդ ելքն ինքնըստինքյան ոչ առաջընթաց շարժում է, ոչ հետընթաց, քանի որ արժեքների տարրեր համակարգերը հարաբերականորեն են գնահատվում՝ կախված գնահատողի նախապատվություններից:

Արդի դարաշրջանում կարելի է խոսել թե՝ «ինքնության», թե՝ «նույնականացման» ճգնաժամերի մասին: «Ինքնության» ճգնաժամը ներկայումս պայմանավորված է ինքորմացիոն տեխնոլոգիաների և մարդկանց գիտակցության ու մտածողության հետ և դրանց միջոցով մանիպուլացիաներ կատարելու գործնականում անսահման հնարավիրություններով: Ու կրթական հաստատությունների, ընտանիքի, պետական և այլ ինստիտուտների անգործության կամ մարդուն արժեքների ու կողմնորոշիչների համակարգ մատուցելու իրենց գործառություն թերացման հետևանքով հնարավոր է, որ ստեղծվեն, այսպես կոչված, խճանկարային կամ «կոլաժային» մարդիկ: Մարդիկ, որոնց հոգևոր աշխարհը պատկերավոր կարելի է նմանեցնել կոլաժի (ֆրանսերեն՝ «սոսնձում-կպցնում» բառից): Եթե ձևավորված աշխարհայացք և արժեքային համակարգ ունեցող մարդուն բնորոշ է իրականության ամբողջական պատկերացում և առաջացող հիմնախնդիրների լուծնանը համակարգված մոտեցում, ապա «կոլաժային» մարդկանց բնորոշ է իրականության հատվածական պատկերացում, ինքորմացիայի պատառիկների մեխանիկական գորգադրում, իրադրական ու անհետևողական մտածողություն: Նրանց «ինքնությունն» ամբողջական չէ, այլ գոյանում է տարբեր խոտության, ֆակտուրայի ու հյուսվածքի հատվածների մեխանիկական համատեղման միջոցով: Նման մարդիկ չեն հասցնում կամ գուցե չեն կարողանում ձևավորել արժեքների համակարգ, քանի որ տարբեր ծագում ունեցող մշակութային ալիքների ազդեցությամբ մեկ մի կողմ են նետվում, մեկ՝ մյուս: «Աշխարհի արտակարգ հարստությունը կործանարար է ազդում հետևողականության վրա, որն անհրաժեշտ է գիտակցության ամբողջականության համար»<sup>10</sup>, ինքորմացիայի ահագնությունն ու բազմազանությունն իր ողջ ծանրությամբ ընկնում է անհատի վրա՝ ժամանակ ու ցանկություն չթողնելով անհատի կողմից ներքին ինքնաստեղծ աշխատանքի համար: Ընդունակ չլինելով ինքնածանաչման (որի շնորհիվ կարող էին ստեղծել իրենց «ինքնության» պատկերը)՝ նման մարդիկ դառնում են անորֆ, փոփոխական ու անդեմ: Դա անհատական մակարդակում նույնիսկ չի գիտակցվում որպես ճգնաժամ, քանի որ ճգնաժամ ապրելու համար աճի որոշակի մակարդակ է պետք, բայց

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 36:

ամհատական «ինքնության» ամբողջականություն չունեցող մարդիկ իրենց կոլեկտիվ, օրինակ, ազգային «ինքնության» համար կարող են հանդես գալ որպես անբարեհույս տարրեր, քանի որ ազգային ինքնությունը ենթադրում է նվիրվածություն այդ ինքնության իդեալներին, այնինչ «ինքնության» ամբողջականության չհասած մարդիկ ի վիճակի չեն նվիրվածության, ռազմավարական նպատակներ ունենալու և դրանց հիմնավորական գործունեության: Նկատի առնելով այդ հանգամանքը, Նժդեհը կոչ է անում հայ Երիտասարդությանը. «Ասպետ եղիր նախ անձիդ նկատմամբ: Դժվարանո՞ւմ ես հարգել քեզ - բարոյապես կորած ես արդեն: Զո՞ւրկ ես ինքնահարգանքի և ինքնատիրապետումի գորեղ զգացումներից - աշխարհն էլ ոչինչ չունի քեզ ուժեղ դարձնելու: Ինքնաճանաչությամբ մարդ դառնում է ներքնապես խաղաղ, ինքնավստահ և աներկյուղ: Նրա լյանքի նավը, որ առաջ խաղալիք էր գոյության ալիքների ձեռքին, ստանում է հաստատ և անշեղ ընթացք: Ծանիր քեզ, հայ Երիտասարդ»<sup>11</sup>.

Նախորդ դարի հասարակական աղետների դարաշրջանում մարդկության մեծագույն մտածողներից շատերը խոսեցին մարդկայնության պակասի, հոգակոր ճգնաժամի, անձնավորության ամբողջական ձևավորման խնդիրների մասին, ինչը տվյալ հոդվածում պայմանականորեն անվանվում է «ինքնության» ճգնաժամ: Ի թիվս այլ մտածողների, հարցին անդրադան Ա. Շվեյցերը, Կ. Յասպերսը, Կ. Յունգը<sup>12</sup>, որոնք աշխարհայացքային տարբեր լուծումների տեսանկյունից ցույց տվեցին, որ հասարակական ճգնաժամների հիմքում մարդու ամբողջականության կորուստն է: «Ինքնության» հետազոտվող խնդրի առումով հետաքրքրական է Կ. Յունգի «Չբացահայտված ինքնություն» Երկը, որում, ի զարմանս ընթերցողի, Յունգը չի օգտագործում վերնագրում տեղ գտած և իր իսկ երկերում հանգամանորեն մշակված «ինքնություն» Եզրույթը: Երկի գլխավոր միտքն այն է, որ մարդու մեջ մեծ տեղ է գրավում անգիտակցական նախասկիզբը, որի միակողմանի անտեսումը մարդուն զրկում է ներդաշնակությունից ու անբողջականությունից և դարձնում հեշտ կառավարելի զանգվածի ներկայացուցիչ՝ խաղալիք տոտալիտար պետական կառույցների ձեռքին<sup>13</sup>:

Մեկ այլ՝ «Յոգեբանական տիպեր» աշխատության մեջ Յունգը հանգամանորեն վերլուծում է «ինքնություն» հասկացությունը: Տվյալ հոդվածի շրջանակներից դուրս է «ինքնության» յունգյան վերլուծության ներկայացումը, որը պահանջում է առանձին ուսումնասիրություն, սակայն կարելի է նշել Երկու հանգամանք: «Ինքնության» գաղափարն, ըստ Յունգի, արևմտյան ավանդություն առաջին անգամ գործածվում է XIII-XIV դարերի մտածող Մայստեր Էկիարթը, ըստ որի՝ Յոգին «ինքը դառնալով արարած, արարել է Աստծուն, այնպես որ Նա չի եղել այնքան ժամանակ, քանի դեռ

<sup>11</sup> Նժդեհ Գ. Յատընտիր, Եր., 2001, էջ 98:

<sup>12</sup> Տե՛ս Շվեյցեր Ա. Կультура и этика. М., 1973, Յասպերս Կ. Духовная ситуация времени. М., 2008, Յոնգ Կ. Психика: структура и динамика. М., 2005, էջ 290-368:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը:

հոգին չի դարձել որոշակի արարվածություն»<sup>14</sup>: Մյուս ուշագրավ կողմն այն է, որ, ըստ Յունգի, մարդը չի կարող իր «ինքնությունը» ճանաչել մինչև վերջ, քանի որ դրանում առկա է սկզբունքորեն անճանաչելի կողմ: Յունգը գրում է. «Որպես էնախրիկ հասկացություն «ինքնությունը» նշանակում է մարդու հոգեկան երևույթների ամբողջական սպեկտր: ....Այնքանվ, որքանով հոգեկան ամբողջականությունը, որը բաղկացած է գիտակցական և անգիտակցական բովանդակություններից, պոստույատիվ է, այն իրենից ներկայացնում է տրամացնենալ հասկացություն, քանի որ այն ենթադրում է էնախրիկ իհմք ունեցող անգիտակցական գործոնների գոյություն և, այդպիսով, բնութագրում է որոշակի կեցություն, որը կարող է նկարագրվել միայն մասնակիորեն, քանի որ մյուս մասը մնում է (ցանկացած տվյալ պահի) չճանաչված ու անսահման» (ընդգծումը իմն է - Ս. Պ.)<sup>15</sup>: Սա ցույց է տալիս, որ «ինքնությունն» ինչ-որ իմաստով ինքնին իր է, սկզբունքորեն ամբողջապես անճանաչելի, սակայն դրանում կան տարրեր, որոնց մասին կարելի է որոշակիորեն դատել: Պարզ է, որ «ինքնության» ամբողջականության մասին դատողություններն ել կրում են հարաբերական բնույթ:

Վերադարձալով «ինքնության» խնդրի կիրառական վերլուծությանը, կարելի է նշել, որ «ինքնության» ամբողջականության չհասած մարդիկ պակաս չեն եղել նաև գլորալացմանը նախորդած ժամանակաշրջաններում, բայց անցյալում նման մարդկանց առաջնորդելու համար գործել է խորհրդանշանների, ծեսերի, հերոսների ու արժեքների միասնական համակարգ, որը հնարավորություն է տվել մարդկանց ձևավորելու տվյալ հանդության իրենց պատկանելության գգացումը: Այսինքն՝ անհատական «ինքնության» ձևավորված չլինելու պայմաններում իսկ հնարավոր է եղել «կոլեկտիվ» կայուն ինքնության ձևավորում<sup>16</sup>: Այնինչ արդի՝ գլորալացման դարաշրջանում անհատական «ինքնության» ամբողջականացման

<sup>14</sup> Խոր Կ. Психологические типы. Минск, 1998, էջ 285: Յետաքրքրական է, որ քրիստոնեական պավանդույթի ու նեկանարանությունների շրջանակներում էկիարքը խոսում է նույնությամ, նույնականացման, առանձնանալու և հոգու «ինքնության» մասին: Դա ցույց է տալիս յունայան այն կանխադրույթը, որ իմանախնդիրները եղել են բոլոր ժամանակներում, պարզապես տարբեր հասկացություններով են արտահայտվել ու տարբեր աշխարհայացքային դիրքերից վերլուծվել: Էկիարքն ասում է. «Աստված դրեց նաև հոգու սկիզբը, բայց հոգին, ավելցուվից ելնելով, դուրս եկավ հավերժական նախակրից դեպի արարածները և այդահոտվ կորցրեց նոյնականությունը Աստծոն հետ և օտարացավ սեփական նմանությունից: Մինչդեռ հենց նա է, որ իր արարած լինելու կեցության մեջ ստեղծում է «Աստծուն», որը մինչ այդ չկար:....Եթե Աստված կատնի ոչնչացված հոգուն, նրան, որը դարձել է ոչինչ (շնորհի ուժով), քանի որ ինքնությունը է և ինքնականություն, այդ ժամանակ Աստված նրանում կարարի իր հավերժական գործը, ու դրանով բարձրացնելով՝ նրան դուրս կքաշի իր արարածային վիճակից» (ընդգծումներն իմն են – Ս. Պ.): (Մայստեր Էքչարտ. Դуховные проповеди и рассуждения, М., 1991, с. 138-139):

<sup>15</sup> Տես Խոր Կ. Психологические типы, էջ 505:

<sup>16</sup> Ավելին, է. Ֆրոնդ խոսում է մի երևույթի մասին, երբ անհատական «ինքնության» չհասած մարդիկ ստիպված են լինում իրենց նույնացնել միայն այն խմբի միջոցով, որին պատկանում են, ինչի հետևանքով առաջանում են սնապարծություն և այլ խմբերին պատկանողների հանդեպ կարծրատիպեր ու պիտակներ (տես Fromm E. The Sane Society. N-Y. 1955, էջ 15-27, 362):

շհասած մարդկանց դարանակալում են տարատեսակ մտածելաձևեր, կենսահարացույցներ, երկրագնդի տարբեր ծայրերում սկիզբ առած հոգևոր խմբավորումներ, որոնք ընտրության թվացյալ ազատության պայմաններում ավելի գրավիչ են թվում՝ հեռացնելով մարդուն պատմականորեն իրեն տրված կոլեկտիվ «ինքնությունից»:

Այս գործընթացի մեկնաբանության համար օգտակար կարող է լինել հոլանդացի արդի սոցիալ-մարդաբան և հոգեբան Գիիրթ Յոֆսաթեդի ուսմունքը մշակույթի՝ որպես մտածական ծրագրավորման մասին: Զբաղվելով մշշմշակութային հետազոտություններով և ուսումնասիրելով արժեքային համակարգերը տասնյակից ավելի երկրներում, նա գալիս է եզրակացության, որ մշակույթը նման է համակարգիչների ծրագրերին. ինչպես համակարգչային ծրագրերն են «աշխատեցնում» մեքենաները, այնպես էլ մշակույթը «աշխատեցնում» է մարդկանց միտքը: Այս մարդկանց «մտածական ծրագրավորում» է, որի շնորհիվ տարբեր մշակույթներ կրող մարդիկ տարբեր կերպ են արձագանքում համանման իրադրություններում<sup>17</sup>. «Սա չի նշանակում, ինչ խոսք, որ մարդիկ ծրագրավորված են այնպես, ինչպես համակարգիչներն են ծրագրավորված, - նշում է Յոֆսաթեդը, - անձնավորության վարքը միայն մասնակիորեն է կանխորոշված իրեն բնորոշ «մտածական ծրագրերով» (software of the mind). մարդն ունի դրանցից շեղվելու հիմնարար կարողություն, հանդես բերելու նոր, անկանխատեսելի, ստեղծագործ կամ քանդարար մոտեցում»<sup>18</sup>: «Ծրագրավորումը» սկսվում է ընտանիքից, շարունակվում միջավայրում՝ բակում, ընկերական խմբերում, դպրոցում, աշխատավայրում և ավելի լայն համայնքներում: Մշակույթը, ըստ Յոֆսաթեդի, միշտ կոլեկտիվ երևույթ է, քանի որ այն ընդհանուր է միևնույն միջավայրում ապրող մարդկանց համար: Մշակույթը «մտքի կոլեկտիվ ծրագրավորում է, որի շնորհիվ մի խմբի կամ կատեգորիայի ներկայացնելու համար մարդկանց համար»: Յոֆսաթեդը նշում է, որ տարբեր մշակույթներում տեղի է ունենում տարատեսակ «ծրագրավորում», սակայն մշակույթների ավելի ու ավելի փոխներգործության դարաշրջանում օտար «ծրագրերը» հեշտորեն ներխուժում են տարբեր միջավայրեր:


Ունենալով այլ խնդիր, չղնելով ինքնության հարցը, Յոֆսաթեդը մարդու մտածական ծրագրավորման մեջ եզակիության երեք մակարդակ է տարբերակում: Առաջին մակարդակում՝ եզակիության բուրգի հիմքում, ընկած է մարդկային բնույթն ընդհանրապես, բուրգի միջին շերտը մշակույթն է՝ իր նեղ իմաստով, իսկ գագաթային մասը անձնավորության ոլորտն է: Անձնավորության շերտը գոյանում է որպես ածանցյալ համամարդկային բնույթից ու տվյալ մշակույթին բնորոշ առանձնահատկություններից Յոֆսաթեդը ներկայացնում է համակենտրոն շրջանների տեսքով, ո-

<sup>17</sup> Տե՛ս Hofstede G., Cultures and Organizations. Software of the Mind. Intercultural Cooperation and its Importance for Survival. McGraw-Hill. N.-Y. San Francisco etc, 1997, էջ 4-7:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 5:

ոռնց արտաքին թաղանթը խորհրդանշաններն են, ներսի շերտերում հերոսներն ու ծեսերն են, իսկ միջուկը կազմում են արժեքները (տե՛ս պատկեր 2)<sup>20</sup>:




### Պատկեր 1

Ժառանգելու և սովորելու արդյունք է:  
Բնորոշ է անձնավորությանը, անհատական է:

Սովորելու արդյունք է:  
Բնորոշ է խմբին կամ կատեգորիային:

Ժառանգված է:  
Բնորոշ է բոլոր մարդ էակներին:

### Պատկեր 2



1. Խորհրդանշաններ
2. Հերոսներ
3. Ծեսեր
4. Արժեքներ

Ասվածը վերաձևակերպելով «ինքնության» հիմնախնդրի տեսանկյունից, կարելի է ընդունել, որ անձի «ինքնությունը» ձևավորվում է համամարդկային հատկանիշների, տվյալ մշակույթին բնորոշ առանձնահատկությունների և միայն տվյալ մարդուն բնորոշ անհատական յուրակերպությունների ամբողջացման շնորհիվ: Ավանդական հասարակություններում անհատական «ինքնությունները» ձևավորվում են կոլեկտիվ՝ մշակութային «ինքնությունների» ազդեցությամբ, ճիշտ այնպես, ինչպես ներկայացվում է պատկեր 1-ում:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում արդի հասարակական օգարգացումների, մասնավորապես՝ գլոբալացման գործընթացների հետևանքով: Պատկեր 1-ում երկրորդ շերտը՝ տվյալ հասարակական խմբին կամ կատեգորիային (տվյալ դեպքում՝ ազգին) բնորոշ մշակույթի շերտը, կորցնում է իր ուղղահայաց «սահմանները» (թեպետ դրանք, ըստ էության, միշտ էլ պայմանա-

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 6-9:

կան են եղել միջմշակութային շփումների մշտական առկայության շնորհիվ): Իսկ քանի որ գլոբալացումը տնտեսական, սոցիալական, քաղաքական ու մշակութային սահմանների ավելի ու ավելի թափանցիկացման գործընթաց է, պատկերացնենք, որ տվյալ պատկերի երկրորդ շերտը սկսում է ձևավորվել այլ մշակութային տարրերի ակտիվ միջանտության (ինտերվենցիայի) միջոցով։ Եվ առաջանում են «ապամշակութային» (նեզ հուզող համատեքստում՝ «ապագգային» կամ «ապէտիկական») «ինքնություններ»։ Այդ «ինքնությունները» կրող անձանց անհատական որոշակիությունը ձևավորվում է ոչ թե դարերի ընթացքում ամրապնդված, ժամանակի քննություն անցած, տվյալ էթնոսի կամ ազգի լիարժեք լինելիության ապահովմանն ուղղորդված մշակութային շերտի ազդեցությամբ, այլ դրսից ներմուծված տարատեսակ խորհրդանշանների, հերոսների, ավանդույթների ու արժեքների ազդեցությամբ։ Դա հաճախ կատարվում է անձի կողմից անգամ չգիտակցվելով՝ ինֆորմացիոն հասարակության «զանգվածային միջնորդների»՝ մասսմեդիայի շնորհիվ։

Ասվածը մեկնաբանենք խորհրդանշանների, հերոսների, ծեսերի ու արժեքների համեմատական վերլուծության որոշ փորձերով։ Ընդունելով, որ մշակույթներին ներհատուկ խորհրդանշանների վերլուծությունը հետազոտության հետաքրքիր և համակողմանի բնագավառ է, կարելի է դիտարկել դիմախասայի, նարմնի շարժումների խորհրդանշանային մեկնաբանությունը տարբեր մշակույթներում, առօրյայում կիրավող իրերի սինվոլիկ ծանրաբեռնվածությունը։ Գիտելի է, օրինակ, որ ներկայումս հայ հասարակության ներկայացուցիչները գիտեն տարբեր ապրանքապիտակների խորհրդանշաններ (մասնավորապես ավտոմոբիլային ֆիրմաների շատ ու շատ խորհրդանշաններ), հագուստների վրա կրում են ու արագ տարբերում օտարածին բազմաթիվ նշաններ (օրինակ՝ մոդայի տարբեր տների նշաններ), այնինչ ծանոթ չեն հայոց ինքնության բաղադրիչ բազմաթիվ խորհրդանշանների (օրինակ՝ մեր նախարարական տների գինանշաններին, քանդակագործության, եկեղեցաշինության մեջ հանդիպող բազմաթիվ խորհրդանշանների և այլն) ու, չնչին բացառություններով, չեն կրում ազգային տարագ կամ դրա տարրերը պարունակող հագուստ։

Արդի հայ մանուկների «հերոսներն» են, օրինակ՝ Սարդ-մարդը, Չղջիկ-մարդը, Սպունգ-Բոբը, Շրեկն ու Ֆիննան և այլն, այնինչ հայկական հրաշալի շատ հերոսներ՝ Սասունցի Դավիթը, Առյուծածն Միերը, Արեգնազանը, Անահիտը և ուրիշները, դեռևս չեն դարձել հայ մանուկների «ընկերները»։ Մեր հասարակությունը մտածելու խնդիր ունի, քանի որ վերոնշյալ և այլ օտարածին հերոսներ ու նրանց գործելաձները դաշնում են հայ երեխաների «ինքնության» տարր անգամ առանց նրանց կողմից գիտակցվելու։ Այդ «հերոսների» վարքաձները և արձագանքելու երթեմն, մեղմ ասած, տարօրինակ եղանակները հեշտորեն յուրացվում են երեխայի դեռևս չձևավորված «ինքնության» կողմից՝ հավակնելով ապագայում դառնալ հասունացող անձնավորության արժեքային հանակարգի վրա ազդելու ներունակությամբ օժտված հանգանանք։ Ինչ խոսք, սա չի նշանակում, որ պետք է անջրպետվել այլ մշակույթներից (գլոբալացման դարաշրջանում դա անհերեք է թվում), սակայն մեր մշակույթը պետք է ունենա արտաքին

ճնշումներին հակադրվելու ներունակություն: Տվյալ դեպքում՝ կարիք կա ստեղծելու այնպիսի մուլտֆիլմեր և կինոնկարներ, որոնց հերոսները հայ են՝ օժտված հայեցի մտածողությամբ ու արձագանքելու հայեցի «ծրագրերով»: Դայ մանուկները պետք է ունենան ընտրության, այսինքն՝ դրսից մատակարարվող հերոսների դիմաց ազգային հերոսներին տեսնելու, նրանց արժեքներով ապրելու հնարավորություն: Այսօր այլևս արդիական չեն միայն հեքիաթներ լսելով հերոսներին «կառուցելո», ինչպես եղել է անցյալում, քանի որ երեխային պետք են տպավորիչ պատկերներ, «մարմնացած»՝ տեսանելի հերոսներ («Վիզուալ» մշակույթ): Երիտասարդությունը նույնպես հերոսների կարիք ունի, և եթե զգացվում է գեղարվեստորեն գրավիչ ու բարոյապես բարձր հերոսների ստեղծման դժվարություն, կարելի է դիմել հայ դասական հեղինակներին՝ արդիականցնելով նրանց ստեղծագործություններն ու մատուցելով ԶԼՄ-ների միջոցով (ցանկալի է, որ նման արդիականացումները արվեն ճաշակով, որպեսզի հերոսները չփառանան իրենց նախատիպերի «ծաղրանկարները»): Չմոռանանք, որ հերոսների խնդիրը եղել է հայ մտածողների ուշադրության կենտրոնում, նրանք կերտել են հերոսների այնպիսի կերպարներ, որոնք կարող են դառնալ և դարձել են հայ երիտասարդության համար օրինակներ: Դիշենք Աբովյանի, Ռաֆֆու, Սուրացանի, Թումանյանի և այլոց ազնիվ, համարձակ ու հայեցիությամբ (բարի բարձրագույն իմաստով) օժտված հերոսներին: Նժենք նույնպես անդրադառնում է այս հարցին, ասելով. «Առանց վեհ և հրահանգիչ օրինակների՝ չկա դաստիարակություն: Թող գիտակցեն այդ հայ մամուլը վարողները և մեծապես օգտվեն անցյալի բարոյա-գաղափարական հարստությունից: Թող հաճախ նրանք բնութագրեն հայ ժողովրդի ընտիր որդիներին, որոնք իրենց կյանքով թե մահով մի բան ավելացրել են ազգ կոչվելու մեր իրավունքին: Թող նրանք հաճախ պատմեն իրենց ընթերցողներին, թե ինչպես սիրեց հայրենիքը Ա-ն, թե ինչպես ծառայեց իր ժողովրդին Բ-ն, թե ինչպես ընկավ իր ժողովրդի համար Գ-ն և այլն»<sup>21</sup>:

Ծեսերի ոլորտում նույնպես զգացվում է արտաքին «անդեմ» միջամտության (ինտերվենցիայի) առկայություն. շատ ու շատ ծեսեր «արդիականացվում» են՝ համարվելով այլ (հիմնականում՝ արևմտյան) մշակություններից վերցված տարրերով: Նման նի տարր է, օրինակ՝ հարսանյաց հանդեսների ժամանակ փեսայի կողմից հարսնացուի հագուստի դետալներից մեկի «փոխանցումը» հաջորդիվ փեսայանալու հնարավոր հավակնորդներին: Երբեմն էլ «հայկականանում» են անբողջությամբ օտար ծեսեր, օրինակ՝ Վալենտինի տոնն իր ատրիբուտներով՝ այն դեպքում, եթե վաղուցվանից ունեցել ենք U. Սարգսի տոն: Ծեսերն արտաքինից թվում են պարզապես որոշակի գործողություններ կատարելու կարգ, այնինչ իրենցում կրում են «ինքնության» վրա ազդելու ներուժ: Դրանցում ամրագրվում են տվյալ մշակույթին բնորոշ արժեքների ու դերերի աստիճանակարգերը, տարրեր երևույթների հանդեպ վերաբերմունքը, որոշ գործընթացների խորհրդանշական իմաստները: Եթե ծեսը ծնվել է տվյալ մշակույթի շրջանակներում, իմաստները հասանելի են այն իրականացնողներին, ներդաշնակ են ու հասկանալի,

<sup>21</sup> Գ. Նժենեհ, Հատընտիր, էջ 41:

իսկ եթե ծեսն «այցելել» է այլ մշակույթից, այն կարող է «փոխել» «ինքնության» որոշ տարրեր: Ասվածը չի նշանակում, որ տեղ չպիտի լինի թարմացման ու նորացնան, պարզաբեն այդ նորացումը պետք է գոնե չհակասի տվյալ մշակույթի բարոյականին ու ամբողջականությանը:

Մշակութային շերտի ամենախորքում արժեքներն են: Դա նշանակում է, որ նրանք ամենաարմատավորվածն են տվյալ մշակույթը կրող մարդկանց «ինքնության» մեջ, իետևապես նաև՝ համենատարար ամենաքիչ վտանգվածը: Յոգեբանները, ըստ Յոֆսթեդի, գտնում են, որ մարդն իր կյանքի առաջին տասը տարիների ընթացքում է յուրացնում արժեքների իր համակարգի միջուկը, որը հետագայում ենթարկվում է աննշան փոփոխությունների<sup>22</sup> (նկատի ունենք «ինքնության» ձևավորման գործընթացը, այլ ոչ թե գիտակցված նույնականացումը արժեքների նախընտրելի համակարգի հետ): Շատ ու շատ արժեքներ, ձեռք բերվելով վաղ մանկության ընթացքում, դառնում են մարդկանց մտագործելակերպի ուղենիշներ, մնալով, սակայն, չգիտակցված մարդկանց մեջ մասի կողմից: Սեփական արժեքների գիտակցումը, որպես կանոն, տեղի է ունենում այլ մշակույթների դեմ առ դեմ հանդիպելիս, բայց արժեքների համակարգի գիտակցված վերլուծությունն արդեն նույնականացնան տարր է: Եթե արժեքների հիմնական մասը ձևավորվում է կյանքի առաջին տասնամյակում, հարկ կա մտածելու, թե ինչ են ստանում այդ տարիքի երեխաներն այսօր Յայատանում. քանի հետաքրքրաշարժ կրթական ծրագրեր կան մեր ԶԼՍ-ներում, ի՞նչ գեղարվեստական, ազգային ու համամարդկային արժեքներ են յուրացնում նրանք, որքա՞ն ժամանակ են անցկացնում հեռուստացույցի, համակարգչի առջև, ի՞նչ խաղեր են խաղում, դրանցում բռնության ի՞նչ մակարդակ կա, մարդկային արժեքրկման ի՞նչ տարր... Ի վիճակի կլինե՞ն, արդյոք, հետագայում վերցնել այն ազգային բարձրը, որ մեր «ուշացած» հասարակությունը պետք է փորձի մատուցել նրանց՝ անտեսելով նրանցում արդեն որոշակիորեն առկա «կոլաժային» «ինքնության» արժեքները... Ասվածը չի նշանակում, որ մշակութային ալիքները բերում են միայն վտանգներ: Գլոբալացման գործընթացներն ունեն նաև դրական կողմ, դրանք հնարավորություն են տալիս հաղորդակցվելու համամարդկային արժեքների, մարդկության մեծագույն նվաճումների հետ...

Ինչ վերաբերում է նույնականացնանը, պետք է նկատի ունենալ, որ մտածողներն ինքնության (Identity, անդենտիվություն) ճգնաժամի մասին խոսելիս հիմնականում նկատի ունեն հենց նույնականացման ճգնաժամը: Վիտսորին Յովսլեն գտնում է, որ նույնականացման ճգնաժամն «ինքնության» մերժումն է «ես»-ի կողմից<sup>23</sup>: Այն կարող է նաև բացահայտ չլինել, այսինքն՝ իր «ինքնությունը» մերժող «ես»-ը կարող է փորձել խարել ինքն իրեն՝ նետվելով տենդագին գործունեության մեջ, որի նպատակը մեկն է՝ «ես»-ի ուշադրությունը շեղել «ինքնությունից»: ճգնաժամը բացահայտ դարձնելը, ինքն իրեն խոստովանելը, որ այլև անհնար է նույնանալ սեփական «ինքնության» հետ, Յովսլեն համարում է նույնականացման ճգնաժամի հաղթահարմանն ուղղված կարևոր քայլ: Ըստ նրա՝ նույնականաց-

<sup>22</sup> Ste' u Hofstede G., նշվ. աշխ., էջ 8:

<sup>23</sup> Ste' u Hesle B., նշվ. աշխ., էջ 30:

ման ճգնաժամը ցավոտ ապրում է, գուցեն՝ ամենացավալի կենսական ապրումը... Նման ճգնաժամ ապրող մարդը կասկածում է արժեքների այն համակարգին, որ դավանել է մինչ այդ՝ օտարվելով այդ արժեքները դավանող և իրեն նախկինում հարազատ մարդկանցից, ինչն իր հերթին ավելի է սրում ճգնաժամը... Իսկ կոլեկտիվ, տվյալ դեպքում ազգային, նույնականացնան ճգնաժամերը լինում են այն ժամանակ, երբ մարդն այս կամ այն պատճառներով հիասքափում է այն արժեքներից ու վարքանիշներից, որոնք բնորոշ են իր ազգակիցներին, ժխտում է ազգային «ինքնությունը», որն արտահայտվում է ազգային խորհրդանշանների մերժման, կոլեկտիվ հիշողության կորստի, միասնական ապագայի հանդեպ անհավատության, ինչպես նաև իր վարքանշային ու նկարագրական կերպարների միջև հակասության ձևով<sup>24</sup>: Նման ճգնաժամ են ապրում, օրինակ, մեր այն հայրենակիցները, որոնք հայտնվելով այլ երկրներում (կրթություն ստանալու կամ այլ նպատակներով), հավանում են այնտեղ առկա արժեքային համակարգերը, իսկ վերադառնալով Դայաստան ու տեսնելով իրենց դավանած արժեքներին ու վարքանիշներին հակասող ինչ-ինչ իրողություններ, սկսում են մերժել հայոց «ինքնությունն» ընդհանրապես: Նրանք հաճախ չեն նկատում (կամ չեն ուզում նկատել), որ որոշակի բացասական իրողություններ (օրինակ՝ սոցիալական անարդարության, կոռուպցիայի առկայությունը և այլն) չեն կարող նույնացվել ողջ հայ «ինքնության» հետ: Երբեմն էլ նման չարդարացված էքստրապոլյացիաներ են արվում՝ արդարացնելու համար արտագաղթելու և ավելի հարմարավետ պայմաններում կյանքը շարունակելու իրենց ձգտումները: Սեփական «ինքնության» մերժման մեկ ուրիշ օրինակ կարելի է համարել հայոց մշակութային ժառանգության հարցում անտեղյակությունը և օտար մշակույթներում ինչ-որ դրական հանգամանքներ տեսնելիս անմիջապես դրանց հետ նույնանալու ձգտումը: Ինչ խոսք, ինքնանույնացման նման խնդիրները կպակասեն, եթե կարողանանք արդիականացնել հայոց մշակութային հիշողությունը, ապրեցնել և այսօրվա «լեզվով» խոսեցնել մեր հոգևոր մշակույթի «գանձերը», մի բան, որ այլ մշակույթներում արվում է հաճախ հաջող կերպով:

Մարդկային մտքի զարգացման հետաքրքիր շրջադարձ է տեղի ունենում ինքնության խնդրի վերլուծման շնորհիվ: Ինքնության խնդիրը ծնվում է արդիականության դարաշրջանում և զարգանում հետարդիականության մշակույթում, որին բնորոշ էր մեծ արժեքների փոքրացումն ու բարոյական արժեքների հարաբերականությունը փաստելը: Սակայն ինքնության խնդրի ծնունդն ու դրա հնարավոր լուծումները կապված են բարոյական կողմնորոշիչների ու իդեալների գաղափարի գործունության փաստման հետ: Գիտակցված նույնականացման համար կարևոր է, որ ամձն ունենա վարքանիշի կամ արժեքի իր պատկերացումը, որն իր հերթին չի հակասի ունիվերսալ, համամարդկային վարքանիշներին: «Ինչպես քրիստոնեության արշալույսին, այնպես էլ այժմ մենք դեմ հանդիման կանգնած ենք առ բարոյականության ընդհանուր ճգնաժամը, բարոյականության, որը չի կարողանում համընթաց քայլել գիտական, տեխնիկական և հասարակական առաջընթացի հետ»<sup>25</sup>, - գրում է Կ. Յունգը: Իսկ Վ. Դյու-

<sup>24</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 40:

<sup>25</sup> Խոր Կ. Ներառյալ անունը. ս. 366.

լեն շարունակում է. «Մարդկությանը բարոյական կողմնորոշիչներից զրկելը ոչ մեկին երջանիկ չի դարձնի. ընդհակառակը, իենց կողմնորոշիչների բացակայությունն է ներշնչում մարդուն կյանքի անհմատության մասին միտքը»<sup>26</sup>: Նույնականության ամենախոր և անհույս ճգնաժամն, ըստ նրա, ծնվում է իենց այն սկզբունքից, որ չկան բարոյական վարքանիշեր: Չէ՞ որ «ճգնաժամի» գաղափարն իսկ ունի բարոյական կոնսուտացիաներ, իսկ բարոյական վարքանիշերը մերժողներն իրենց ազատել են այն գաղափարից, որ սխալը տարբերվում է ծշմարտությունից: Յյուլեն խոստովանում է, որ համընդիմանուր ճանաչում ունեցող արժեքներից հրաժարվող մարդկանց հետ շփումը դառնում է արտակարգ դժվար<sup>27</sup>:

Բարոյականի դերն էլ ավելի կարևորվում է ազգային ինքնության դեպքում, քանի որ «ազգային ինքնությունը» որպես Բացարձակ էություն իմացաբանորեն «իդեալական օբյեկտ է»: Բարոյագիտական առումով դա մի իդեալ է՝ ազգի հոգևոր ծգտումների բարձրագույն նպատակ»<sup>28</sup>: Այնպես որ ազգային ինքնության մասին հնարավոր չէ խոսել այն միջավայրերում, որտեղ մերժվում են բարոյականության ընդհանուր հիմքերն ու իդեալի գաղափարը...

**СИЛЬВА ПЕТРОСЯН – Некоторые вопросы философского анализа проблемы идентичности.** – В статье анализируются понятия "самость" и "идентичность"; термин "инкнутюн" (самость) в обоих этих смыслах широко используется в армянской философской литературе. Но при таком его употреблении трудно объяснить процесс кризиса идентичности. В русле разработок В. Хесле и Г. Хофстеда в статье показано, что кризис "самости" или "идентичности" происходит на разных уровнях. Этого можно избежать внутренней работой индивида и культуротворческой кооперацией общества. Кроме того, в статье проанализирована связь идентичности с возрождённой идеей о важности моральных ориентиров и приведён ряд примеров по проблематике национальной идентичности в современном армянском обществе.

**SILVA PETROSYAN – Some Questions of Philosophical Analysis of the Problem of Identity.** – The article analyzes the concept of identity and selfness, and it is shown that in the Armenian philosophical literature it has become a tradition to use the term "in-qnutjun-selfness" in both senses, as it is important for understanding the processes of identity crisis and selfness. The author discusses the usage of the term "selfness" in foreign and Armenian literature. She follows to concepts suggested by V. Hesle and G. Hofstede for description of some processes of identification in modern Armenian society. Finally, the author comes to the conclusion that the illumination of the problem of identity in modern philosophy is the answer to the challenges of the relativist society and the solution of it is returning to the concept of morality as ground for building selfness and identity.

<sup>26</sup> Խեսլե Վ., Աշխ., էջ 34:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 35:

<sup>28</sup> Լ. Աբրահամյան, Ազգային ինքնությունը որպես պրոցես // Ինքնություն, Եր., 1995, էջ 21: